

ԺԵՆՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՏԱՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ
ՆԱՐ-ԴՈՍԻ «ՄՊԱՆՎԱԾ ԱՂԱՎՆԻՆ» ՎԻՊԱԿՈՒՄ*DOI: 10.24234/journalforarmenianstudies.v1i64.87***ԱՄՓՈՓՈՒՄ**

Սույն հոդվածում ներկայացված է Նար-Դոսի «Սպանված աղավնին» վիպակում գործածված օտար բառերի լեզվական քննությունը՝ հիմնավորված համապատասխան օրինակներով: Անդրադարձ ենք կատարել այն օտար բառերին, որոնք ռուսերենից և նրա միջոցով այլ լեզուներից հայերենին են անցել, առանձնացրել նրանց օգտագործման պատճառները: Ներկայացրել ենք այլալեզվյան մեջբերումները, սուկ ոճական արժեք ներկայացնող օտար բառերը, տվյալ ժամանակահատվածում հայերեն համարժեքներ չունեցող օտար բառերը, որոնք այդ ժամանակահատվածի համար եղել են փոխառություններ: Անդրադարձ ենք կատարել նաև օտար բառերի, էկզոտիզմների և ազգային ռեալիաների էական նմանություններին:

Առաջնային խնդիր համարելով օտարաբանությունների և փոխառությունների տարանջատումը հայերենում՝ նշել ենք նաև այս կարգի բառերի առնչության եզրերը, քանի որ ներկայումս՝ արդի գրական հայերենի զարգացման ընթացքում, շփոթ է առաջանում օտար և փոխառյալ բառերի տարբերակման հարցում:

Դիտարկել ենք նաև վիպակում գործածված այնպիսի միավորները (օրինակ՝ *խելացի – ինտելիգենտ, սովորական – պրոզայիկ* և այլն), որոնցում հայերեն բառի կողքին հեղինակը ներկայացնում է օտար լեզվի տարբերակը: Սա արված է բացառապես խոսքի հնչեղության և սաստկացման միտումով:

Քիչ չեն նաև այնպիսի դեպքերը, երբ խոսքին երգիծական երանգ հաղորդելու և հերոսներից մեկին հեզնելու նպատակով գործածվում են համապատասխան օտարաբանություններ. խոսքի նման երանգավորումները վառ արտահայտված են քննարկվող վիպակում (*պրոկուրոր, դիլետանտ, ինտելիգենտ* և այլն):

Առանձնացրել ենք նաև հաճախադեպ օգտագործված օտարաբանությունները Նար-Դոսի հիշյալ վիպակում և ըստ այդմ եկել այն եզրակացությանը, որ Նար-Դոսի խոսքը այնքան էլ զերծ չէ օտար բառերի անհարկի գործածությունից, չնայած որ կա նաև ժամանակահատվածի բնորոշ պարտադրանքը:

Բանալի բառեր և արտահայտություններ. Օտարաբանություններ, Նար-Դոս, «Սպանված աղավնին», բառային օտարաբանություններ, էկզոտիզմներ, ազգային ռեալիաներ, օտար հիմքով բառեր, ոճական արժեք:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Լեզվական օտարաբանությունը այլ մտածողական և քերականական ձևերի գործածությունն է մեկ այլ լեզվում: Այդպիսի ձևերի գործածությունը քիչ չէ նաև գրական հայերենում, որ մեծ մասամբ տեղի է ունենում բառացի թարգմանության հետևանքով:

«Օտարաբանությունը այլալեզու բառ, դարձվածք կամ արտահայտություն է (արտասանական երանգ), որ գործածվում է մայրենի լեզվում, թափանցում է նրա մեջ, և որի օտարամուտ լինելը (մերված չլինելը մայրենի լեզվում) խոսող հանրության կողմից գիտակցվում է, և կամ որի համարժեք բնիկ միավորը առկա է մայրենի լեզվում» (**Պողոսյան Պ., 1990**):

Սույն հոդվածում անդրադառնում ենք անվանի գրող Նար-Դոսի «Սպանված աղավնին» վիպակի լեզվում կիրառված ամենից առաջնային, այնուհետև այլ կարգի օտարաբանություններին:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Օտարաբանությունները Նար-Դոսի «Սպանված աղավնին» վիպակում ուսումնասիրելու համար նախ կիրառվել է որոնողական-էմպիրիկ մեթոդը, որի միջոցով ստեղծագործության բառային շերտից առանձնացվել են օտարաբանությունները:

Ինչպես նաև օգտագործվել է համեմատական-նկարագրական մեթոդը, որի արդյունքում դասդասվել են այն օտար բառերը, որոնք կիրառվել են որոշակի միջավայրում՝ օգտագործվելու պահանջից ելնելով:

Օգտվել ենք համեմատական մեթոդից, արդյունքում պարզ դարձավ, որ գործածված օտարաբանություններից որոշների համար միայն վերջերս են ստեղծվել հայերեն համարժեք բառեր:

ՔՆՆԱԼԿՈՒՄ

Հայ գրականության մեջ բազմիցս համակողմանի քննության են ենթարկվել Նար-Դոսի ստեղծագործությունները: Մույն հոդվածում քննարկել ենք նրա «Սպանված աղավնին» վիպակի լեզվական նյութը՝ օտարաբանությունների դիտարկման և դասակարգման առումով:

«Սպանված աղավնին» վիպակում հանդիպող օտարաբանությունները հիմնականում ռուսերենից հայերենին անցած բառեր են, մասամբ՝ ռուսերենի միջոցով այլ լեզուներից կատարված փոխառություններ:

Մեր կողմից առանձնացված բառային օտարաբանությունները կարելի է բաժանել երկու խմբի.

1. բառեր, նախադասություններ, որոնք գործածվում են վիպակի հերոսների խոսքում՝ օտար լեզվով խոսելիս կամ ինչ-որ արտահայտություն անելիս, օրինակ՝

«-Счастливые часов не наблюдают, — վրա բերեց նա և նորից ծիծաղեց» (ՆԴ)¹:

«Ես թեև շատ էլ չեմ սիրում փիլիսոփայությունն առհասարակ, իբրև «**ПЛЕННОЙ МЫСЛИ РАЗДРАЖЕНИЕ**», ինչպես ասում է բանաստեղծը, բայց և այնպես ինքս մասամբ փիլիսոփա եմ, այսպես ասած՝ էպիկուրյան կարգի պիլիսոփաներից» (ՆԴ):

«-**Фу ты черт!** - բացականչեց Թուսյանը, վեր կացավ և սկսեց անցուդարձ անել սենյակում» (ՆԴ):

«Բռնեցի այնպես ձեռեցի, ու քիչ մնաց ինձ բանտ նստեցնեին **за самосуд**» (էջ 231):

¹ Հոդվածում հանդիպող այս և մյուս բնագրային օրինակները վերցրել ենք Նար-Դոսի «Սպանված աղավնին» վիպակից (Նար-Դոս, 1978):

«-К черту ее». (ՆԴ):

«Соловья баснями не кормят». (ՆԴ):

«Ես Ռուբեն Թուսյանը լինեմ և նստեմ քեզ մոտ լա՞ց լինեմ, իբրև մի **баба**».

(ՆԴ):

2. Օտար բառեր, արտահայտություններ, որոնք հանդիպում են հեղինակի կամ հերոսների խոսքում և ունեն սուկ ոճական արժեք:

Օրինակ՝ «Վնաս չունի. թեև սիրահարված ես, բայց **լոգիկայով** ես խոսում»

(ՆԴ):

«Ըստ երևույթին նրա մեջ շարունակվում էր նախորդ գիշերը հրաժեշտի ժամին նրա մեջ իմ նկատած հոգեկան հեղաշրջման **պրոցեսը**» (ՆԴ):

«Կլոր սեղանի վրա դրված էր մի **ալբոմ** և մի գիրք ևս կաշեպատ կազմով» (ՆԴ):

«-Դե որ հիշեցիր արի, մեկ էլ **պոռոշտի** անենք» (ՆԴ):

«Գալիս էի տուն, որ **չեմոդանս** առնեմ, գնամ **վագզալ**, վրա հասավ երկրորդ պատճառը. . . » (ՆԴ):

«Դեռ **գարադավոյ** էլ կկանչի, որ ցույց տա թե տեսե՞ք՝ որքան նամուսով կին եմ»

(ՆԴ):

Օտարաբանությունների և փոխառությունների տարանջատումը հայերենում առաջնային խնդիրներից մեկն է: Շատ հաճախ շփոթ է առաջանում օտար և փոխառյալ բառերի տարբերակման հարցում: Փոխառություններ կան, որոնք առհասարակ ժամանակի ընթացքում վերածվում են օտարաբանությունների: Սա տեղի է ունենում այն դեպքում, երբ օտար բառի հայերեն համարժեքը գործածվում է լայն խավերի կողմից՝ դուրս մղելով առաջինին: Սակայն, քանի դեռ դա տեղի չի ունեցել, հեղինակներն օգտագործում են օտար բառեր: Կարծում ենք՝ Նար-Դուսի վիպակում մի շարք օտարաբանությունների գործածությունն արդարացված է տվյալ ժամանակահատվածում նշյալ բառերի հայերեն համարժեքների բացահայտության պատճառով:

Օրինակ՝ «Մինչդեռ շատ լավ հիշում եմ, **կլուբում** տարած վաթսուն ռուբլուց մի քսան-քսանհինգ **ռուբլի** դրել էի **ժիլետիս** գրպանը, և այդ փողը գնաց առանձին

կարփնետում, իսկ մնացածը դրել էի **պինջակիս** ծոցի գրպանը, և այդ փողն էր, որ հանգել էր» (ՆԴ):

Միաժամանակ նկատելի է, թե քանի օտարաբանություն է օգտագործել Նար-Դոսը մեկ նախադասության մեջ՝ բացի ժիլետ և պինջակ բառերը: Այդ բառերն են՝ **կլուր, ռուբլի, կարփնետ**:

Արտերկրում ապրող հայերն իրենց խոսքում անպայման պիտի կիրառեն օտար բառեր, որոնց գործածությունը բնորոշ է միայն այդ տարածքում բնակվող մարդկանց: Քանի որ վիպակի դեպքերը կատարվում են Թիֆլիսում, Նար-Դոսը անմասն չէր կարող մնալ «կինտո» բառի կիրառումից, որն օգտագործում են միայն վրացիները՝ անվանելով աղքատ խավի մարդկանց. «Չէ՞ որ ես բռնի կերպով չտիրացա նրան, ինչպես անում են վերջին **կինտոները**» (ՆԴ):

Բնական է և պատճառաբանված, որ արտասահմանում սովորած երիտասարդն իր խոսքում պիտի օգտագործի օտար բառեր՝ արտահայտված տվյալ երկրի լեզվով, ինչպես՝ «-Թե այն, երևի, որ կամ ինքը գա, կամ նամակով **ռանդեու** նշանակի որևէ տեղ» (ՆԴ):

Պատահական չէ, որ ուսանողական շրջանում այսօր էլ լայնորեն կիրառվող *ռեկտոր* բառը մի շարք օտարաբանությունների կողքին իր խոսքում օգտագործում է նաև Ռուբեն Թուսյանը՝ լինելով ուսանող՝ «Մեր ընկեր-ուսանողներից մեկը պարզ մատնիչ էր, **օխրանկայի** և *ռեկտորի* գաղտնի **ագենտը** համալսարանում» (ՆԴ):

Նար-Դոսը լայնորեն գործածում է նաև այնպիսի օտար բառեր, որոնք ցույց են տալիս դրամական և չափման միավորներ.

Օրինակ՝ «Սենյակում կային գահավորակի այս ու այն կողմը դրված երկու բազկաթոռ, որոնցից մեկի բազուկը կոտրված էր, մի **դյուժինի** չափ աթոռ. . . » (ՆԴ):

«Գրպանում որ մի **մանեթ** ունենար, մորթեիր - մի **կոպեկ** չէր ծախսի. . . » (ՆԴ):

«-Ասենք, ինձ շատ փող հարկավոր չէ, - ավելացրեց նա. - մի տասը-տասնհինգ **ռուբլի** որ տաս, բավական կլինի. . . » (ՆԴ):

«Նստած էր հսկայական եղննու մի հաստ արմատի վրա, որը մի կես **արշին** բարձր էր մնացել գետնից» (ՆԴ):

«Մեր գնացած ճանապարհը հազիվ մի երկու **վերստ** լիներ, բայց նկատեցի, որ ոտներն արդեն դանդաղ է շարժում» (ՆԴ):

Այս բառերն ունեն նաև էկզոտիզմ անվանումը: Էկզոտիզմները նույնացվում են բառարանային համարժեք չունեցող բառերի (безэквивалентная лексика) և ռեալիաների (реалии) հետ: Էկզոտիզմների մասին առավել մանրամասն ներկայացվում է ռուս լեզվաբանության մեջ:

Էկզոտիզմները սերտորեն կապված են այսպես կոչված ազգային ռեալիաների (իրույթ)՝ այլ ժողովրդի կյանքին, կենցաղին, մշակույթին, նաև պատմությանն ու աշխարհագրությանը, լեզվամտածողությանը բնորոշ առարկաների, երևույթների, հասկացությունների հետ: Բայց ամեն դեպքում տարբերություններ կան. ազգային ռեալիաները էկզոտիզմներ են, սակայն ոչ բոլոր էկզոտիզմներն են ազգային ռեալիաներ, ինչպես նաև բառարանային համարժեք չունեցող ոչ բոլոր միավորներն են էկզոտիզմներ (**Քամայան Ա., 2015**):

Էկզոտիզմներն առավել հաճախ հանդիպում են թարգմանական գրականության մեջ, սակայն ավելի հետաքրքիր է դրանք դիտարկել բնագրային աշխատություններում:

Կարծում ենք՝ քննվող վիպակում նման կարգի բառերը ճիշտ կլինի դիտարկել որպես փոխառություններ՝ հայերեն համարժեքներ չունենալու տեսանկյունից:

Շատ հաճախ հեղինակը օտարաբանություններ է գործածում խոսքին երգիծական երանգ հաղորդելու և հերոսներից մեկին ծաղրելու նպատակով: Նման երանգավորումները քիչ չեն «Մպանված աղավնի» վիպակում, օրինակ՝

«Եվ դու չես մտածում, թե որ ժամանակներո՞ւմ ես ապրում, և դու, որ կրթված, **ինտելիգենտ** մարդ ես, քեզ համեմատում ես քո խավար, տգետ պապի՞ հետ» (ՆԴ):

«Ախ դու **ժուլիկ, ժուլիկ**» (ՆԴ):

«Ու սկսեց նայել մերթ ինձ, մերթ Գարեգինին այնպիսի մի **կոմիկական** տարակուսանքով, որ ծիծաղս չկարողացա զսպել» (ՆԴ):

«Ինչպես տեսնում եմ, դու շատ լավ **պրոկուրոր** կլինես,- ավելացրեց նա նորից ծիծաղելով» (ՆԴ):

«Տետրակը պահեցի մոտս, խոստանալով, որ կկարդամ, թեև առաջ վճռեցի, որ մի հիմար բան կլինի գրածը, ինչպես շատ **դիլետանտների** գրվածքներ» (ՆԴ):

«Միայն մշտաժպիտ աչքերը, որոնք նրա առասպելական թույլ կամքի և հեզահամբույր բնավորության արտահայտիչն էին, փայլում էին ինչ-որ անմիտ, անհուն **իդիոտական** երջանկությամբ» (ՆԴ):

«Տարիներ հետո իմացա, որ տնից դուրս արած, թափառում է մայրաքաղաքի փողոցներում, իբրև **պրոֆեսիոնալ ինտելիգենտ** մուրացիկ և արբեցող» (ՆԴ):

Հաճախ հեղինակը վիպակի իրավիճակներն ավելի ցայտուն ներկայացնելու համար է օգտագործում օտար բառեր: Իրավիճակների նմանատիպ բնութագրումներ են առկա հետևյալ նախադասություններում.

«Թեև հեռագիրն ստանալուց հետո ուզում էի վերադառնալ Պետերբուրգ, բայց մեկ էլ մտածեցի, որ չարժե **կոնֆլիկտ** ստեղծել» (ՆԴ):

«Այն, ինչ որ սովորական և առօրյա երևույթ էի համարում, իսկապես մի **տրագեդիա** է եղել» (ՆԴ):

«Սա **անարխիա** է, կասես. ոչ, սա ինքը կյանքի փիլիսոփայությունն է» (ՆԴ):

Նար-Դոսը լայնորեն օգտագործել է նաև թուրքական և պարսկական հիմքով օտարաբանություններ: Քանի որ Նար-Դոսը ծնվել և ապրել է Հայաստանից դուրս, այլ երկրի բներանգ ստեղծելու համար կիրառել է այդպիսի բառեր: Օտարաբանություններով Նար-Դոսի հերոսները նույնիսկ արտահայտում են իրենց զգացմունքները, իսկ նկարագրությունները դառնում են ավելի դիպուկ և ազդեցիկ: Օրինակ՝

«-Մտածում ես. «Էս **հարամգաղեն** համ ի՛մ հյուրն է, համ էլ ինքն է բաներ պահանջում, որ **զահրումար** անի» (ՆԴ):

«Բայց որովհետև Գարեգինը, ըստ երևույթին, տրամադրություն չունեի ոչ նույնիսկ ժպտալու, Բաղիրյանը հանկարծ լուրջ դեմք առավ, **դայթանից** կախ ընկած ակնոցը ժիլետի գրպանը կոխեց, մի ձեռքով կես գրկեց փեսացուին և սկսեց մխիթարել» (ՆԴ):

«Այդ ուրախության ազդեցության տակ նորից **քյալագյոզությունս** բռնեց. վճռեցի, որ իջնի, ես էլ իջնեմ, և ինչ ուզում է՝ պատահի» (ՆԴ):

«Կանգ առավ և... դե ինչ երկարացնեմ. բողոքներ, մեղադրանքներ, հանդիմանություններ— այդ բոլորը եղավ, իհարկե, բայց, փառք **այլահին**, ոչ լեզուս է պակաս, ոչ համարձակությունս, ոչ էլ փորձառությունս» (ՆԴ):

«Բայց ես այնպիսի **օյին** հանեցի նրա գլուխը, որ նա ստիպված եղավ տեղափոխվել ուրիշ համալսարան» (ՆԴ):

«Տոլստոյը մեծ գրող է, ճիշտ է, բայց ... **մղղսի** է» (ՆԴ):

«Կտա – լավ, չի տա – հե՛րը կանհիծեմ, բոլոր **դավթարներն** ու մուրհակները կպատռեմ, փողը, սնդուկը կվառեմ, իրեն էլ կբռնեմ կխեղդեմ, որ ինձ պես մի լակոտ է ցնկնել» (ՆԴ):

Վիպակում հանդիպում են նաև այնպիսի նախադասություններ, որտեղ հայերեն բառի կողքին հեղինակը ներկայացնում է այլալեզվյան տարբերակը: Սա, իհարկե, արված է խոսքի հնչեղության և սաստկացման միտումով.

«Հա՛, այս մեկը ճիշտ է, որ Սառան ուրիշների պես հիմար չէ, — ավելացրեց նա, նորից դառնալով Գարեգինին, — և իսկույն վրա չէր ընկնի ուրախացած. նա ծանրաբարո, **խելացի**, **ինտելիգենտ** աղջիկ է, որի համար այսպիսի զիզի-բիզի բաները կարող են այնքան էլ նշանակություն չունենալ» (ՆԴ):

«Իսկ բուն ռոմանը, ինչպես ամեն մի ռոման, այնքան **սովորական** և **պրոզայիկ** մի բան է, որ չարժե մանրամասնությունների մեջ մտնել» (ՆԴ):

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով Նար-Դոսի «Սպանված աղավնին» վիպակում տեղ գտած օտարաբանությունների քննությունը՝ կարելի է եզրակացնել, որ գրական-գեղարվեստական խոսքում օտարաբանությունների կիրառումը հիմնականում կախված է տվյալ ժամանակահատվածում հայերեն համարժեքներ չունենալու, մասամբ էլ խոսքի հնչեղությունն արտահայտելու պահանջից: Միաժամանակ Նար-Դոսի խոսքարվեստում հանդիպում են բավական մեծ թվով օտարաբանություններ, ինչը վկայում է այն մասին, որ հեղինակի խոսքը բավարար չափով հղկված չէ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Նար-Դոս (1978), Պատմվածքներ, վիպակներ, Երևան, «Լույս» հրատ.:
2. Պողոսյան Պ. (1990), Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, հ. 1, Երևան, ԵՊՀ հրատ.:
3. Քամալյան Ա. (2015), Օտարաբանություն, փոխառություն, էկզոտիզմ, Երևան, «Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն», № 2 (17), էջ 66-80, ԵՊՀ հրատ.:

REFERENCES

1. Nar-Dos (1978), Patmvac'qner, vipakner /Stories, novels/, Yerevan, publish "Luys" .
2. Poghosyan P. (1990), Xosqi mshakowyt'i & otwagitowt'yan himownqner /Basics of speech culture and stylistics/, volume 1, Yerevan, YSU.
3. Kamalyan A. (2015), O'tarabanowt'yown, p'oxar'owt'yown, e'kzotizm /Foreign words, borrowing, exoticism/, Yerevan, "Articles of Yerevan University. Philosophy", № 2 (17), p. 66-80, YSU.

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՆԴ – Նար-Դոս

Женя Оганнисян

Стилистическая ценность применения иноязычных слов

в повести “Убитый голубь” Нар-Доса.

Заключение

Ключевы слова и выражения: Иноязычные слова, Нар-Дос, “Убитый голубь”, лексические иностранные слова, экзотизм, национальные реалии, зарубежные слова, стилистическое значение.

В данной статье представлено лингвистическое исследование иноязычных слов, примененные в повесте Нар-Доса «Убитый голубь», на соответствующих примерах. Были упомянуты иноязычные слова, перешедшие с русского и других

языков на армянский, причины их употребления. Были представлены иноязычные цитаты, слова, имеющие только стилистическую окраску, а также такие слова, которые не имеют армянские эквиваленты в новом периоде истории армянского языка. В исследовании речь идет еще о существенном сходстве иноязычных языков.

Считая различие иноязычных слов и заимствований в армянском языке первоочередной проблемой, мы отметили также границы слов такого порядка, поскольку в настоящее время, в ходе развития литературного языка, имеет место некоторая путаница в решении вопроса различения иноязычных и заимствованных слов.

В повесте некоторые истинно армянские и иноязычные слова используются параллельно (*խելացի – ինտելիգենտ, անլորակաշիւ – արագաշիկ* и т. д.), за счет тенденции стилистической окраски авторской речи.

Также немало случаев, когда соответствующие фразеологизмы используются с целью придать речи сатирический тон и высмеять одного из персонажей. Подобные оттенки речи отчетливо выражены в обсуждаемой повесте (прокурор, дилетант, интеллигент и т. д.).

Нами также выделены часто употребляемые иноязычные слова в упомянутой повесте Нар-Доса и тем самым пришли к выводу, что язык автора не свободна от ненужного употребления таких слов и словоформ.

Zhenya Hovhannisyan

Stylistic implications of using foreign words in story “The Lost Dove” by Nar-Dos.

Conclusion

Key words and expressions: Foreign words, Nar-Dos, “The Killed Dove”, lexical foreign words, exoticism, national realities, stylistic meaning.

This article presents a linguistic study of foreign words used in Nar-Dos’s story “The Killed Dove”, using relevant examples. Foreign words that were transferred from Russian and other languages to Armenian and the reasons for their use were mentioned. Foreign language quotes, words that have only a stylistic connotation, as well as words that do not

have Armenian equivalents in the new period of the history of the Armenian language were presented. The study also talks about the significant similarity of foreign languages.

Considering the difference between foreign words and borrowings in the Armenian language to be a priority problem, we also noted the boundaries of words of this order, since at present, in the course of the development of the literary language, there is some confusion in resolving the issue of distinguishing between foreign and borrowed words.

In the story, some truly Armenian and foreign words are used in parallel (*խելացի – ինտելիգենտ, սովորական – պրոպայիզ*, etc.), due to the tendency of the stylistic coloring of the author's speech.

There are also many cases when the corresponding phraseological units are used to give the speech a satirical tone and make fun of one of the characters. similar shades of speech are clearly expressed in the story under discussion (*prosecutor, amateur, intellectual*, etc.).

We also highlighted frequently used foreign words in the mentioned story by Nardos and thereby came to the conclusion that the author's language is not free from unnecessary use of such words and word forms.

Ժենյա Հովհաննիսյան - ՀՊՄՀ աղադ. Ա. Ղարիբյանի անվան հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ: Գիտական հետաքրքրությունները՝ ժամանակակից հայոց լեզու, ժամանակակից հայոց լեզվի ուսուցման մեթոդիկա: j.m.5.1997@mail.ru

Женя Оганесян - Специалист кафедры армянского языка и методики его преподавания им. акад. А.С. Гарибяна АГМУ, соискатель кафедры. Научные интересы: современный армянский язык, методика преподавания армянского языка. j.m.5.1997@mail.ru

Zhenya Hovhannisyan - Specialist of the Department of Armenian language and methods of teaching it. acad. A.S. Garibyan ASMU, candidate of the department. Scientific interests: modern Armenian language, methods of teaching the Armenian language.
j.m.5.1997@mail.ru

Խմբագրություն է ուղարկվել 08.12.2023թ.

Հանձնարարվել է գրախոսության 12.12.2023թ.

Հրատարակման է ներկայացվել 05.06.2024թ.